13115

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«21» 11 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 268-25

Նախաձեռնող՝ ***«Մետէքսիմ» ՍՊԸ***
ք. Երևան, Ազատության 27/1

Գործունեությունը՝ ***Մասիս համայնքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում գործող կապարաթթվային մարտկոցների վերամշակման արտադրամասի վերապրոֆիլավորում***
Արարատի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 268-25

«21» Հոկտեմբերի 2025թ.

Մասիս համայնքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում գործող կապարաթթվային մարտկոցների վերամշակման արտադրամասի վերապրոֆիլավորման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Մետէքսիմ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք

Ներածական մաս. Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության/այսուհետ՝ Հաշվետվություն/ «Մետէքսիմ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ Արարատի մարզի Մասիս համայնքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում՝ վարձակալությամբ օգտագործվող տարածքում, որը գտնվում է արդյունաբերական գոտում՝ իրականացնում է մետաղների ջարդոնի ընդունման, տեսակավորման և վաճառքի գործունեություն:

Նախկինում այս տարածքում ընկերությունը նաև իրականացնրել է բանեցված կապարաթթվային մարտկոցների ընդունում, մասնատում և հանված կապար պարունակող մնացորդի վերամշակում՝ ձուլման եղանակով, ստանալով ձուլակտորներ:

Համաձայն Հաշվետվության ներկայում Ընկերությունը բանեցված կապարաթթվային մարտկոցներ չի ընդունում և չի իրականացնում դրանց վերամշակման աշխատանքներ:

Տարածքում արտադրական գործունեությունը վերականգնելու նպատակով ընկերությունը որոշել է կատարել վերապրոֆիլավորում և կազմակերպել ընդունվող պղնձի, պղինձ պարունակող համաձուլվածքների և ալյումինի թափոնների վերամշակում՝ ձուլման եղանակով, ստանալով համապատասխան ձուլակտորներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Մասիս համայնքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում՝ արդյունաբերական գոտում:

Մասիս համայնքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ,

Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին բնակավայրերին:

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է հանրապետության սեյսմաակտիվ գոտիներից մեկում:

Շրջանի կլիման տաք, խիստ ցամաքային է: Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.9°C, հունվարինը՝-3.5°C, ապրիլինը՝ 12.8°C, հուլիսինը՝25.5°C, հոկտեմբերինը՝ 13.1°C: Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝-28.9°C, դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ +42.6°C է՝ դիտվել է օգոստոսին: Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 41 սմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ:

Նախատեսվող գործունեության անմիջապես ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Նախատեսվող գունավոր մետաղների ձուլման արտադրամասը տեղակայված է գոյություն ունեցող շինությունում, որի մակերեսը կազմում է 996 մ^2: Արտադրամասի շահագործման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները և մոտեցող ավտոճանապարհը: Տարածքը վաղուց յուրացված է արտադրական, որպես օբյեկտ: Ընկերությունն ունի մետաղաձուլման ոլորտի մասնագետներ և անհրաժեշտ փորձ:

Ընկերությունն իրականացնում է մետաղների ջարդոնի ընդունում, տեսակավորում և պահեստավորում՝ դրա համար նախատեսված պինդ, անջրաթափանց հատակ ունեցող հրապարակում: Ընդամենը տարեկան ընդունվում է 1870 - 2720 տ գունավոր և սև մետաղների ջարդոն, այդ թվում.

- չտեսակավորված ալյումինի ջարդոն՝ 900 – 1200 տ,
- չտեսակավորված պղնձի ջարդոն՝ 150 – 170 տ,
- չտեսակավորված արույրի ջարդոն՝ 20 – 30 տ,
- չտեսակավորված պողպատի ջարդոն պարունակող կոնստրուցիաների թափոններ՝ 800 - 1320 տ:

Ջարդոնն ընդունելուց հետո այն անցնում է տեսակավորման փուլ, որի ժամանակ ընդհանուր ջարդոնից առանձնացվում է գունավոր մետաղների (ալյումին, պղինձ և արույր) ջարդոնը, ինչն էլ հանդիսանում է նախատեսվող ձուլման համար հիմնական հումքը: Գունավոր մետաղների տեսակավորման և պողպատյա կոնստրուկցիաների մասնատման արդյունքում առաջանում է չտեսակավորված պողպատի ջարդոն, որը տրամադրվելու է համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին:

Գունավոր մետաղների և պողպատի թափոնները հրդեհապայթունավտանգ չեն: Թափոնների ընդունման և պահեստավորման տեղամասում աշխատանքներն իրականացվում են տարեկան 340 օր, օրը մեկ՝ 8 ժամյա հերթափոխով:

Ձուլման տեղամասում նախատեսվում է տեղադրել 4 հատ վառարան, որոնցից երկուսը գազով աշխատող, երկուսն՝ ինդուկցիոն: Որպես հումք օգտագործվելու է ալյումինի, պղնձի և արույրի ջարդոնը: Արտադրամասում տարեկան վերամշակվելու է 800 տոննա ալյումին /4.11տ/օր/ և 180 տոննա պղինձ և դրա համաձուլվածքներ /1.68տ/օր/: Ձուլման տեղամասը աշխատելու է տարեկան 340 օր, օրը 16 ժամ, երկու՝ 8 ժամյա հերթափոխով:

Ձուլման արդյունքում նախատեսվում է գունավոր մետաղների ջարդոնից ընդհանուր տարեկան ստանալ 980 տոննա ալյումինի, պղինձի և դրա համաձուլվածքների ձուլակտորներ:

02543163
ՓՈՐՁԱԳՈՒՅՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Աշխատողների թվաքանակը նախատեսված է 34 մարդ, որից 6-ը վարչական աշխատողներ են և ԻՏԱ:

Այլումինի ջարդոնի հալումն իրականացվելու է երկու ստացիոնար (վառարանները ֆիքսված են, բեռնվում են ձեռքով կամ մեխանիկորեն) անդրադարձող վառարաններում (Отражательные печи)՝ յուրաքանչյուրն առավելագույնը 3.5 տոննա տարողությամբ, որոնք տաքացվում են բնական գազով, ունեն էլեկտրոնային կառավարման և հսկման, ինչպես նաև գազի ճնշման տատանումների պաշտպանության համակարգ:

Անդրադարձող վառարաններն այլումինի հալեցման համար հատուկ տիպի արդյունաբերական վառարաններ են, որոնք թույլ են տալիս հալեցնել այլումինն առանց ուղղակի շփման կրակի հետ, ինչը կանխում է մետաղի աղտոտումն այրման արգասիքներով և ապահովում է հավասարաչափ տաքացում:

Անդրադարձնող վառարաններն ի տարբերություն այլ տիպի վառարանների, ձուլվածքի տաքացման համար օգտագործվում է վառարանների պատերի ֆիզիկական ջերմությունը՝ պատերն անընդհատ տաքացվում են գազայրիչներից տրվող բոցով: Հալվող մետաղն աստիճանաբար հոսում և կուտակվում է վառարանի հատակին: Վառարանների պատյանը, հատակը, պատերը և կառուցվածքի տարրերը պատրաստված են պրոֆիլավորված պողպատե արմատուրայից: Հալման գոտին ջերմամեկուսացված է հրահեստ աղյուսներով և այլումասիլիկատային թելքով: Առաջին վառարանում տեղի է ունենալու ջարդոնի նախնական հալում (մինչև ~500°C), որտեղ այլ խարնուրդները և մետաղներն անջատվելու են այլումինից: Այնուհետև այլումինի համաձուլվածքի խորանարդիկները տեխափոխվելու են երկրորդ վառարան, որից հետո ստանալու են սպառման համար անհրաժեշտ տարբեր մակնիշի այլումինի ձուլակտորներ: Ցիկլի ավարտից հետո վառարանը սառեցվում է (~200°C-ից ցածր), ապա մաքրվում մնացորդներից:

Պղնձի ջարդոնի հալումն իրականացվելու է երկու ինդուկցիոն վառարաններում, որոնք աշխատում են էլեկտրաէներգիայով, ունեն էլեկտրոնային կառավարման և հսկման համակարգ:

Ընկերությունը հիմնականում իրականացնում է այլումինի, պղնձի և արույրի ջարդոնի հավաքագրում և տեսակավորում, իսկ իր գործունեության համար ոչ պիտանի մետաղների ջարդոնը հանձնում է այլ կազմակերպությունների: Մթնոլորտ արտանետվող փոշին ունի բարդ բաղադրություն՝ մետաղի փոշի, յուղեր և այլն: Հաշվի առնելով, որ երկաթի ջարդոնի հետ աշխատելիս հիմնական աղտոտիչը երկաթի միացություններն են, ուստի արտանետվող փոշին դասակարգվում է որպես երկաթի օքսիդներ, որը մթնոլորտ է արտանետվում N1 հարթակային աղբյուրից:

Համաձայն Հաշվետվության գազային և էլեկտրական վառարանները հագեցած են գլխանոցներով: Ծխագազերը՝ ածխածնի, ազոտի և այլումինի օքսիդները, ինչպես նաև փոշին, տեղամասից գլխանոցի և խողովակների միջոցով հեռացվում են դեպի ցիկլոններ, որտեղ մաքրվելուց հետո H=15մ բարձրության և d=0.3մ տրամագծով ծխատար խողովակով արտանետվում են մթնոլորտ՝ N2 աղբյուրից:

Մեխանիկական տեղամասում կատարվելու է սարքավորումների և դետալների պատրաստման և վերանորոգման աշխատանքներ: Տեղամասում տեղադրվելու են՝ 1 հատ խառատման հաստոց, 2 հատ ֆրեզերային հաստոց, 1 հատ գայլիկոնող հաստոց: Այս գործընթացից մթնոլորտ է արտանետվելու երկաթի օքսիդներ՝ N3 աղբյուրից:

Գործունեության տարածքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրամատակարարման համակարգերով: Գազամատակարարումն իրականացվելու է ըստ տրված տեխնիկական պայմանի:

02543163
ՓՈՐՁԱԳՆՈՒՄՆԵՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ձուլման արտադրամասի տեխնիկական ջրամատակարարումն իրականացվելու է «ԱՍԿԵ գրուպ» ԲԲԸ-ից՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու կենցաղային կարիքների համար ներկրվում է ջուր 20 լ կամ 200 լ տարաներով առևտրային եղանակով: Արտադրության համար հիմնական ջրապահանջը պայմանավորված է ինդուկցիոն վառարանի հովացման անհրաժեշտությամբ, որը նախատեսված է ջրի լրիվ շրջանառու համակարգով և ներառում է 30 մ³ ջրավազան և հովարան: Արտադրական նպատակներով թարմ ջուրը պահանջվում է շրջանառու համակարգից ջրի կորստի լրացման և ձուլակաղապարների պարբերական լվացման համար: Թարմ ջուրը չնչին քանակով (տարեկան 6.8 մ³) ծախսվելու է նաև փորձարկման լաբորատորիայում: Տնտեսական և խմելու կարիքների համար թարմ ջուրը ծախսվելու է աշխատողների խմելու-կենցաղային կարիքների համար, ցնցուղարանում, վարչական շենքի և լաբորատորիայի հատակների լվացման, ինչպես նաև բաց հրապարակների ջրցանման նպատակով:

Ձուլման արտադրամասի գործունեության հետևանքով հոսքաջրերի արտահոսք դեպի մակերևութային ջրահոսքեր տեղի չի ունենա: Ձուլման արտադրամասը տեղակայված է շինության ներսում բետոնապատված հատակի վրա, ներքին դրենաժային համակարգով: Արտադրամասի շահագործման արդյունքում գրունտային ջրերի վրա ազդեցություն տեղի չի ունենա:

Հաշվի առնելով ջրօգտագործման միջին կորուստը, կեղտաջրերի ծախսը հասնում է 559.6 մ³ /տարի կամ 1.65 մ³/օր, որոնք ուղղվում են սեպտիկ հոր: Բնական օդափոխության և գոլորշիացման հետևանքով սեպտիկից ջրի միջին կորուստը հաշվարկվել է 10 տոկոս և կազմում է 55.96 մ³/տարի կամ 0.16 մ³/օր: Հատուկ տեխնիկայի միջոցով ընկերության տարածքից կեղտաջրերի հեռացման տարեկան քանակը կազմում է 503.65 մ³:

Հաշվետվությունում ներկայացված են արտադրական, խմելու կենցաղային և այլ ջրամատակարարման և ջրահեռացման հաշվարկները:

Համաձայն հաշվետվության արտադրական գործընթացը կազմակերպելու արդյունքում ազդեցությունը մթնոլորտային օդի վրա պայմանավորված է մետաղի ջարդոնի ընդունման, տեսակավորման տեղամասի, ալյումինի և գունավոր մետաղների ձուլման արտադրամասի, մեխանիկական տեղամասի արտանետումներով՝ ազոտի երկօքսիդ (NO2), ածխածնի օքսիդ (CO), պինդ մասնիկներ (ՊՄ):

Համաձայն հաշվետվության՝ արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով կատարվել են «ԷՌԱ» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ:

Աղտոտող նյութը	**Գետնամերձ կոնցենտրացիաները**	
	ՍԹԿ մասով	**մգ/մ³**
Փոշի անօրգանական (SiO2 ≤ 20%)	0.0404	0.0202
Ածխածնի օքսիդ	0.227	1.135
Ազոտի օքսիդներ	0.227	0.0454
Ածխաջրածիններ	0.0079	0.0079
Կախված մասնիկներ, այդ թվում՝ ալյումինի, երկաթի, պղնձի օքսիդներ և այլ միացություններ	0.2598	0.1299

Արտանետումների ցրման հաշվարկերի արդյունքում, սպասվող գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 արտադրական

ձեռնարկությունների սանիտարական նորմերի՝ գունավոր մետաղների (պղնձի, կապարի, ցինկի և այլ գունավոր մետաղների) մինչև 1000 տոննա/տարի քանակով երկրորդային վերամշակման արդյունաբերական օբյեկտները դասվում են IV դասի ձեռնարկությունների կարգին, որոնց համար սանիտարապաշտպանիչ գոտին արտանետման աղբյուրից սահմանված է 100 մետր, ինչն ապահովված է:

Գործունեության ընթացքում առաջանալու են արտադրական և կենցաղային թափոններ:

Համաձայն Հաշվետվության Ընկերության գործունեության ընթացքում առաջացող թափոնների համար մշակվել և սահմանված կարգով շրջակա միջավայրի նախարարի հանձայնեցմանն է ներկայացվել տասնմեկ թափոնի անձնագիր: Գունավոր մետաղների թափոնների զտման, ինչպես նաև պողպատյա կոնստրուկցիաների մասնատման արդյունքում առաջանալու է չտեսակավորված պողպատի ջարդոն, որի համար ընկերությունը ևս նախատեսում է մշակել թափոնի անձնագիր:

Համաձայն գնահատման հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված տրանսպորտի տեղաշարժի, թափոնների տեղափոխման, վառարանների շահագործման ընթացքում մթնոլորտ ծխագազերի՝ ազոտի, ածխածնի, ծծմբի օքսիդների, պինդ մասնիկների արտանետման, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:

Հաշվետվությունում ներկայացվել է անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման, ինչպես նաև հնարավոր տեխնածին և արտակարգ իրավիճակներ և դրանք մեղմող միջոցառումները:

- Ձուլման համար տեսակավորված ջարդոնի նախնական կուտակման պահեստը լինելու է ծածկի տակ՝ բետոնային հատակով:
- Արտադրամասում բոլոր տիպի վառարանները կահավորվելու են գլխանոցներով և արտանետման մեկ ընդհանուր խողովակով, ինչը թույլ է տալիս մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումներն իրականացնել մեկ կազմակերպված աղբյուրով:
- Հեռացվող ծխագազերը՝ ածխածնի, ազոտի և ալյումինի օքսիդները, ինչպես նաև փոշին, տեղամասից գլխանոցի և խողովակների միջոցով հեռացվելու են դեպի ցիկլոններ, որտեղ մաքրվելուց հետո մեկ ծխատար խողովակով արտանետվելու են մթնոլորտ:
- Ձուլակաղապարների հովացումն իրականացվելու է օդիային օդափոխիչով, ինչը թույլ է տալիս խնայել թարմ ջրի քանակը՝ տեխնոլոգիական գործընթացում:
- Աղմուկի նորման բնակելի տարածքների համար ցերեկվա ժամերին կազմում է 45 դԲ, իսկ երեկոյան ժամերին 35 դԲ: Ըստ հաշվարկի արտադրամասից դուրս աղմուկի մակարդակը կազմում է 24.08 դԲ, ինչը նորմայի սահմանում է:

Գնահատման հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանը աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում).

- բոլոր հանգույցները, որոնցում առկա են բարձր ջերմաստիճաններ, ապահովել ջրի շիթի համակարգերով,
- վթարային և հակահրդեհային իրավիճակների համար նախատեսել ջրի պահուստային տարողություններ,
- մետաղի պահեստավորումն իրականացվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքներում,

- վառարանները սպասարկող անձնակազմի համար ապահովելու է բոլոր անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները,
- հալման և ձուլման տեղամասերը կահավորվելու է անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով,
- արտադրամասն ապահովելու է առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով,
- վառարանի տեղափոխումն իրականացվելու է համապատասխան տեխնիկական միջոցներ ունեցող մասնագիտացված տրանսպորտային կազմակերպության միջոցով,
- մետաղների ջարդոնը տեղափոխվելու է ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով,
- վառարանի ջերմային ռեժիմի կառավարման ավտոմատ համակարգի տեղադրում,
- պարբերաբար ստուգվելու է ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերվելու են դրանք,
- արտադրական թափոնները հավաքվելու և պահեստավորվելու են միայն դրանց համար հատկացված վայրերում,
- պարբերաբար իրականացվելու են սարքավորման հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ՝ բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,
- կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում,
- պարբերաբար իրականացվելու է ջրահովացման հանգույցի ստուգում և անհրաժեշտության դեպքում կիրականացվեն նորոգման աշխատանքներ և այլն:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կազմելու են 950.0 հազար դրամ:

Պատճառաբանական մաս. նախատեսվող գործունեությունը կատարվելու է արտադրական տարածքում, որը գտնվում է երկարամյա մարդածին ազդեցության ներքո: Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող գործունեության իրականացումը, ձուլման եղանակով՝ թափոնների տեսքով ընդունվող ալյումինի, պղնձի, համաձուլվածքների վերամշակման հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա լինելու է թույլատրելի նորմերի սահմաններում: Արտադրամասը շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում ներկայացվել են օբյեկտի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Մասիս համայնքը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման և փորձաքննության փուլերում Մասիս համայնքում իրականացվել են հանրային լսումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել գործունեության իրականացման վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ որոնք ուղղված կլինեն բնապահպանական նորմերի պահպանմանը:

- Գործունեության ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

- Գործունեության ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ բացառելով բաց տարածքում թափոնների կուտակումը և պահպանումը:

- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:

- Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մետէքսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Մասիս համայնքի արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովա փողոց 15 հասցեում գործող կապարաթթվային մարտկոցների վերամշակման արտադրամասի վերապրոֆիլավորման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյան